



ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԱԼ
հաղապոսությունների կենտրոն
TRANSPARENCY INTERNATIONAL
anti-corruption center



ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ANNUAL REPORT

'10



Սույն հրապարակումն իրականացվել է Բաց
հասարակության ինստիտուտի Մարդու իրավունքների և
կառավարման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում

This publication was supported by the
Human Rights and Governance Grant Program of the Open
Society Institute

Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն
Հայաստան, Երևան 0025,
Այգեստան, 9-րդ փողոց, տուն 6
Հեռ.՝ +374-10-569910, 553069
Ֆաքս՝ +374-10-571399
Էլ. փոստ՝ info@transparency.am
www.transparency.am

Տպաքանակը՝ 50 օրինակ
Դիզայնը և տպագրությունը՝ Մատիտ Ստուդիայի /
www.matit.am

Transparency International Anti-corruption Center
6 Aygestan 9th Street
Yerevan 0025, Armenia
Phones: (37410) 569910, 553069
Fax: (37410) 571399
Email: info@transparency.am

www.transparency.am

50 printed copies
Design and publication by Matit Studio / www.matit.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ TABLE OF CONTENTS

Ներածական խոսք	2
Կազմակերպության մասին	4
Խորհրդի անդամներ	6
Աշխատակազմ	9
Գործընկերներ/Ցանցեր	10
Ծրագրեր/Նախաձեռնություններ	12
Կոնֆերանսներ/Սեմինարներ	36
Ֆինանսներ/Շնորհատուներ	42
Foreword	3
About the Organization	5
Board Members	7
Staff	9
Partners/Networks	11
Projects/Initiatives	13
Conferences/Workshops	37
Finances/Donors	43

2010
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏԿՈՒԹՅՈՒՆ
ANNUAL REPORT

ՆԵՐԱԾԱԿԱՆ ԽՈՍՔ

FOREWORD

Թրանսփարենսի հնթերնեշլ հակակոռուպցիոն կենտրոնը (ԹԻՅԿ) հիմնադրվել է 10 տարի առաջ՝ Հայաստանում հանրային քաղաքականության և արդյունավետ կառավարման մեջ դրական փոփոխություններ առաջ բերելու հանձնառությամբ:

Տարիներ շարունակ մենք դիմակայել ենք լուրջ մարտահրավերների՝ ցուցաբերելով կոռուպցիայի դեմ պայքարում համակողմանի մոտեցում անցումային փուլի մի երկրում, որում առկա է համակարգային կոռուպցիա և քաղաքական կամքի բացակայություն:

Չնայած այս խոչընդոտներին ու վայրկյաններին՝ ԹԻՅԿ-ն այսօր կենսունակ է և իր լսելի ձայնով ուղի է հարթում դեպի ժողովրդավարական բարեփոխումներ ու կոռուպցիայի նվազեցում: Իր նպատակին հասնելու համար այն զուգակցել է իր հետազոտական ու մոնիտորինգային գործունեությունը շահերի պաշտպանության քարոզարշավների ու նորարարական ակցիաների հետ, ինչը պահանջել է փորձառություն, գիտելիքներ, խիզախություն և նվիրում:

Հատելով մեր կազմակերպության գոյության տասնամյակը՝ մենք պետք է հետադարձ հայացք գցենք մեր կատարած աշխատանքի վրա և գնահատենք մեր ձեռքբերումներն ու կորուստները: Մեր մեծագույն կորուստն, անշուշտ, 2000 թ. հիմնադրումից ի վեր կազմակերպության նախագահ Ամայա Կոստանյանի մահն էր, ով նաև քաղաքացիական հասարակության ճարտարապետներից մեկն էր Հայաստանում: «Մենք չենք պատրաստվում հանձնվել» - սա էր Ամայայի նշանաբանը կյանքում: Այդ իսկ պատճառով Ամայայի բացակայությունը մեզ ստիպում է կրկնապատկել մեր ջանքերը՝ պայքարելով հանուն ավելի լավ Հայաստանի և կոռուպցիայից զերծ աշխարհի, ինչն Ամայայի երազանքն էր: Այդուհանդերձ, մենք միայնակ չենք մեր ջանքերում: Մենք զգում ենք քաղաքացիական հասարակության, մեր գործընկերների, Թրանսփարենսի հնթերնեշլ (ԹԻ) միջազգային համայնքի, ընկերների ու կողմնակիցների հուժկու աջակցությունը: Մեր նվիրյալ խորհրդի, անդամների ու աշխատակազմի աջակցությամբ և համագործակցելով շահագրգիռ խմբերի հետ, մենք ի վիճակի ենք ընդարձակել մեր գործունեության շրջանակն ու նվաճել նոր հորիզոններ հարափոփոխ այս աշխարհում ու խիստ մրցունակ շրջապատում:

Սոնա Այվազյան
Նախագահ

Transparency International Anti-corruption Center was founded 10 years ago with a commitment to make a difference in public policy and good governance in Armenia.

Over the years, we have faced enormous challenges in demonstrating a holistic approach in fighting corruption in a country in transition with systemic corruption and lack of political will.

Against this backdrop of obstacles and turmoil, TIAC is viable today with a strong voice paving its way to democratic reforms and reducing corruption. To achieve its goal, TIAC has combined research and monitoring efforts with advocacy campaigns and innovative actions that required expertise, courage and devotion.

At the turn of this decade we need to look back at our track record and assess our gains and losses. Our biggest loss being the passing away of Amalia Kostanyan, the Chair of the organization since its foundation in 2000 and one of the architects of civil society in Armenia. "We are not going to give up" was Amalia's motto in life. Yet, Amalia's absence makes us redouble our efforts with renewed impetus, to strive for a better Armenia and a world free of corruption, of which she had dreamed of. Nonetheless, we are not alone in our efforts. We feel the strong backing of civil society, our partners, the TI community, friends and supporters. With its dedicated board, members and staff in network and coalition with our stakeholders we are capable of expanding our remit, and finding new horizons in a constantly changing world and highly competitive environment.

Sona Ayvazyan
Chair

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ABOUT THE ORGANIZATION

«Տարածաշրջանային զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 2000 թ. հուլիսին: 2001 թ. հոկտեմբերից այն հավատարմագրվել է «Թրանսփարենսի Ինթերնեշլ» (ԹԻ) միջազգային հակակոռուպցիոն շարժման կողմից՝ ներկայացնելու այդ շարժումը Հայաստանում: 2008 թ. փետրվարին կազմակերպությունը վերագրանցվել և վերանվանվել է որպես «Թրանսփարենսի Ինթերնեշլ հակակոռուպցիոն կենտրոն»:

Առաքելությունը՝ նպաստել արդյունավետ հանրային բաղաբաղանդությանը և կառավարմանը Հայաստանում՝ կրճատելու կոռուպցիան և ամրապնդելու ժողովրդավարությունը:

Նպատակները՝ նպաստել բաղաբաղան, տնտեսական և սոցիալական բարեփոխումների համար բարենպաստ մթնոլորտի ձևավորմանը, աջակցել թափանցիկ ու հաշվետվողական կառավարման համակարգի կայացմանը և խթանել ժողովրդավարական գործընթացները, այդ թվում՝ մարդու իրավունքների պաշտպանությունը և հասարակության մասնակցությունը երկրի կառավարման գործին:

Գործունեությունը՝ բաղաբաղան, տնտեսական և սոցիալական բարեփոխումների վերաբերյալ ուսումնասիրությունների անցկացում, դրանց մոնիտորինգ և գնահատում, այդ թվում՝ ընտրությունների և հանրաքվեների գործընթացներում դիտորդական առաքելության իրականացում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, հանրային բաղաբաղանության և կառավարման գործընթացների վերաբերյալ հասարակության իրազեկում, մասնակցության համար անհրաժեշտ կարողությունների զարգացում, ինչպես նաև՝ մասնագիտական աջակցության տրամադրում, հանրային բաղաբաղանության և կառավարման բարեփոխումների արդյունավետության ուղղված ՀՀ-ի պաշտպանություն, այդ թվում՝ հասարակության մոբիլիզացման և լրբինգի իրականացման միջոցով:



The organization was established in July 2000 as a local NGO - the Center for Regional Development. In October 2001, it was granted the status of accredited National Chapter of Transparency International (TI), the global anti-corruption movement. In February 2008, the organization was reregistered and renamed as Transparency International Anti-corruption Center.

Mission: to promote effective public policy and good governance in Armenia in order to reduce corruption and strengthen democracy.

Goals: to promote the enabling environment for political, economic and social reforms, support the establishment of transparent and accountable governance system and foster democratic processes, including protection of human rights and public participation in governance of the country.

Activities: to conduct research, monitoring and evaluation of political, economic and social reforms, including observation of elections and referenda in accordance with the Armenian legislation; to raise public awareness on public policy and governance processes, build the capacity as well as provide professional support for effective public participation; carry out advocacy, including public mobilization and lobbying to provide effective public policy and governance reforms.

ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ BOARD MEMBERS

Սոնա Այվազյան

Նախագահ¹

ԹԻՅԿ, Ծրագրերի ղեկավար, շրջակա միջավայրի քաղաքականության գծով փորձագետ

Վազգեն Կարապետյան

Եվրասիա համագործակցության հիմնադրամ, Տարածաշրջանային ծրագրերի փոխտնօրեն

Լանա Կառլովա

Տեմպուս ծրագրի Հայաստանի ազգային գրասենյակի ղեկավար

Սուրեն Սաղաթեյան

Գնումների գլխավոր մասնագետ,

ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» ՊՀ

Դավիթ Սարգսյան

«Ամերիա» ՓԲԸ բանկի իրավաբանական ծառայությունների գծով տնօրեն

1 Թրանսփարենսիի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի տասներորդ տարեդարձին նվիրված՝ ս.թ. հուլիսի 23-ին կայացած ընդհանուր ժողովի ընթացքում Ամայա Կոստանյանը վերընտրվել է ԹԻՅԿ Նախագահ, իսկ Սոնա Այվազյանը՝ խորհրդի անդամ: Դավիթ Սարգսյանը, Սուրեն Սաղաթեյանը և Լանա Կառլովան ընտրվել են խորհրդի անդամներ: 2010 թ. հոկտեմբերի 27-ին ԹԻՅԿ-ը գումարել է արտահերթ ընդհանուր ժողով, որի ժամանակ Սոնա Այվազյանն ընտրվել է Նախագահ՝ փոխարինելով Ամայա Կոստանյանին՝ վերջինիս վաղաժամ մահվան կապացույթամբ, իսկ ԹԻՅԿ խորհրդի երկարամյա անդամ Վազգեն Կարապետյանը՝ խորհրդի անդամ:

Sona Ayvazyan

Chair ¹

Projects Director, Environmental Policy Expert, TIAC,

Vazgen Karapetyan

Country Associate Director, Eurasia Partnership Foundation

Lana Karlova

Coordinator, National Tempus Office in Armenia

Suren Saghatelyan

Chief Procurement Officer, "Foreign Financing Projects Management Center" of the Ministry of Finance of Armenia, State Enterprise

David Sargsyan

Head of Legal Department, "Ameria" CJSC



-
- 1 During General Meeting of Transparency International Anti-corruption Center dedicated to its 10th anniversary, convened on July 23, 2010, Amalia Kostanyan was reelected as TIAC Chair and Sona Ayvazyan as Board member. David Sargsyan, Suren Saghatelyan and Lana Karlova were elected as members to Board. On October 27, 2010 TIAC hold an Extraordinary General Meeting during which Sona Ayvazyan was elected as Chair to replace Amalia Kostanyan after her sudden death and Vazgen Karapetyan, TIAC's long-term Board member was elected as Board member.

ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
STAFF



Ամալյա Կոստանյան
հակակոռուպցիոն հարցերով
խորհրդատու

Վարուժան Դոկտանյան
գործադիր տնօրեն

Սոնա Այվազյան
ծրագրերի ղեկավար,
շրջակա միջավայրի
թաղաքականության գծով
փորձագետ

Շահեն Շահինյան
գլխավոր հաշվապահ

Արսեն Դայրումյան
հաշվապահ

Վախթանգ Սիրադեղյան
լրատվամիջոցների գծով
մասնագետ

Նունե Այդինյան
տեղեկատվության գծով
մասնագետ

Խաչիկ Դարությունյան
իրավաբան

Դերիքնազ Տիգրանյան
իրավաբան

Ջրիստինե Մարգարյան
գործերի կառավարիչ

Ջնարիկ Բոյաջյան
վարչական գծով օգնական

Լիլիթ Բավեյան
ծրագրի օգնական

Լենա Նազարյան
ծրագրի օգնական

Գոհար Գրիգորյան
վարչական գծով օգնական

Անահիտ Ալեքյան
իրավաբանի օգնական

Նատալյա Բաբաջանյան
իրավաբանի օգնական

Սարգիս Լալայան
իրավաբանի օգնական

Amalia Kostanyan
Anti-corruption Consultant

Varuzhan Hokyanyan
Executive Director

Sona Ayvazyan
Projects Director,
Environmental Policy Expert

Shahen Shahinyan
Chief Accountant

Arsen Hayrumyan
Accountant

Vakhtang Siradeghyan
Media Specialist

Nune Aydinyan
Information Specialist

Khachik Harutyunyan
Lawyer

Heriknaz Tigranyan
Lawyer

Christina Margaryan
Office Manager

Knarik Boyajyan
Administrative Assistant

Lilit Baveyan
Project Assistant

Lena Nazaryan
Project Assistant

Gohar Grigoryan
Administrative Assistant

Anahit Alekanyan
Lawyer's Assistant

Natalya Babajanyan
Lawyer's Assistant

Sargis Lalayan
Lawyer's Assistant

2010
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏԿՈՒԹՅՈՒՆ
ANNUAL REPORT

ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ ՑԱՆՑԵՐ

PARTNERS NETWORKS

- «Ասացե՛ք մեզ, թե ինչ եք արել» նախաձեռնություն
- Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության համաժողովի Հայաստանի ազգային պլատֆորմի նախաձեռնող խումբ
- Երևանի մամուլի ակումբ ՀԿ
- «Էկոդար» բնապահպանական ՀԿ
- Էկոլոգիական հասարակական դաշինք
- Թեղուտի պաշտպանության խումբ
- Թրանսփարենսի Ինթերնեշնլ Լիտվայի մասնաճյուղ
- Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ ՀԿ
- Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե ՀԿ
- «Համագործակցություն հանուն բաց հասարակության» նախաձեռնություն
- Հայաստանի հելսինկյան կոմիտե ՀԿ
- Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ ՀԿ
- ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի կոալիցիա
- «Մենք ենք այս քաղաքի տերը» հասարակական նախաձեռնություն
- Պետական կարիքների զոհեր ՀԿ
- Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների նախաձեռնող խումբ

- “Asparez” Journalists’ Club NGO
- Civil Society Organizations Initiative Group
- Committee to Protect Freedom of Expression NGO
- “Ecodar” Environmental NGO
- Environmental Public Alliance
- Helsinki Citizens’ Assembly Vanadzor Office NGO
- Helsinki Committee of Armenia NGO
- National Platform of Armenia Initiative Group of the Eastern Partnership Civil Society Forum
- “Partnership for Open Society” Initiative
- Teghut Defense Group
- “Tell Us What You’ve Done” Initiative
- Transparency International Lithuanian Chapter
- UN Coalition against Corruption
- Victims of State Needs NGO
- “We are the Owners of This City” Public Initiative
- Yerevan Press Club NGO

Երևանի ավագանու ընտրությունների և հանրային գնումների մոնիտորինգ Հայաստանում

Իրականացման ժամկետ 01.04.2009 - 28.02.2010

Բյուջե 22,254,000.00 ՀՀ դրամ

Շնորհատու կազմակերպություններ Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամ, Բուդապեշտ

Նկարագրություն

Ծրագրի նպատակն էր նպաստել ընտրական և հանրային գնումների գործընթացներում ՀՀ պատշաճ կառավարմանը թափանցիկության, հաշվետվողականության ու մասնակցության խթանումով՝ ընթացակարգերի և գործընթացների մոնիտորինգի ու վերլուծության, իրազեկության բարձրացման, հանրային քննարկումների ծավալման, շահերի պաշտպանության և լոբբինգի նախաձեռնման միջոցով՝ ուղղված համապատասխան բարեփոխումների իրականացմանը: Ծրագիրը բաղկացած է 2 մասից՝ 2009 թ. մայիսի 31-ի Երևանի ավագանու ընտրությունների մոնիտորինգից և հանրային գնումների մոնիտորինգից, արդյունքների հրապարակմամբ, ներկայացմամբ և տարածմամբ:

Արդյունքներ

2008 թ. ապրիլից մինչև 2009 թ. դեկտեմբեր իրականացված ՀՀ հանրային գնումների մոնիտորինգային հետազոտության արդյունքներն ամփոփվել և վերլուծության են նվիրվել հայերենով լույս ընծայված «Հայաստանի հանրապետության պետական գնումների համակարգի 2008-2009 թվականների գործունեության մոնիտորինգ» հրապարակման մեջ: Այն մասնավորապես ուշադրություն է սևեռում համակարգի հնարավոր կոռուպցիոն ռիսկերի և թերությունների վրա՝ գնումների մասին օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի համադրման միջոցով վեր հանելով համակարգի հնարավոր կոռուպցիոն ռիսկերն ու թերությունները, առաջարկելով քայլեր և մեխանիզմներ հանրային գնումների համակարգում առկա ռիսկերի նվազեցման ու գնումների համակարգի արդյունավետության բարձրացման ուղղությամբ: «Գնումների ուղեցույց գործարարների համար» ձեռնարկը նախատեսված է օժանդակելու ձեռնարկատերերի մոտ պետական գնումների մասին իրավագիտակցության աստիճանի բարձրացմանը: Նրանում փորձ է արվել բարոնեզագրելու գնման բաց մրցույթի գործընթացը, քանի որ այն գերադասելի է տնտեսվարող սուբյեկտների համար: Ներկայացված է գործընթացի մանրամասն սխեմատիկ պատկերը՝ պարզաբանելով բոլոր քայլերը, ներառյալ

Monitoring of Yerevan Council Elections and Public Procurement in Armenia

Implementation period	01.04.2009 - 28.02.2010
Budget	AMD 22,254,000.00
Donors	Open Society Institute Assistance Foundation, Budapest

Description

This project aimed at promoting good governance in electoral and public procurement processes in Armenia. This was achieved by fostering transparency, accountability and participation in the mentioned fields through monitoring and analyzing procedures and processes, raising awareness and generating public debate, initiating advocacy and lobbying for appropriate reforms. The project consisted of two parts; the monitoring of the elections for Yerevan Council on May 31, 2009, and the monitoring of public procurement via the publication, presentation and dissemination of project findings.

Outputs

Research findings of public procurement monitoring, carried out from April 2008 to December 2009 were summed up and analyzed in subsequent **publication** in Armenian - "Monitoring of Public Procurement System of Armenia in 2008-2009." It particularly drew attention to possible corruption risks and shortcomings of the system by comparing procurement legislation and practice and recommended mechanisms and steps in public procurement system to diminish the current risks and to increase effectiveness of the procurement system. "Procurement Guide for Businesses" **manual** in Armenian in 2010, intended to help raise legal awareness of procurement among businesses. It attempted to map open tendering of procurement, since it was preferable for economic agents. The manual presented a detailed scheme of the procurement process, clarified all its steps, including functions arising from the Law on Procurement. Its second part featured several key issues in question-and-answer format and gave their clarifications.

TIAC also came up with Remarks and Suggestions on the Draft of the new Law on Procurement. Several suggestions are reflected in the new Law on Procurement adopted by the Armenian National Assembly (NA) on December 22, 2010.




2010
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏԿՈՒԹՅՈՒՆ
ANNUAL REPORT

«Գնումների մասին» ՀՀ օրենքից բխող գործառույթները: Ձեռնարկի երկրորդ մասում հարց ու պատասխանի ձևաչափով ներկայացված են գնումների ոլորտի բազմաթիվ հիմնահարցեր և դրանց պարզաբանումները:

ԹԻՅԿ-ը նաև հանդես է եկել առաջարկություններով և դիտողություններով «Գնումների մասին» ՀՀ նոր օրենքի նախագծի վերաբերյալ: Որոշ առաջարկություններ ներառվել են «Գնումների մասին» ՀՀ նոր օրենքում, որն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2010 թ. դեկտեմբերի 22-ին:

ԹԻՅԿ-ը զեկույց է կազմել 2009 թ. մայիսի 31-ին տեղի ունեցած՝ Երևանի ավագանու ընտրությունների ընթացքում իրականացված դիտորդական առաքելության արդյունքների վերաբերյալ:

TIAC compiled a report on the results of Yerevan City Council election observation mission, carried out on the voting day, May 31, 2009.



Շահերի բախում

Իրականացման ժամկետ 01.04.2009 - 31.03.2010

Բյուջե 22,000,000.00 ՀՀ դրամ

**Շնորհատու
կազմակերպություններ** Մեծ Բրիտանիայի դեսպանություն, Երևան

Նկարագրություն

Ծրագրի նպատակն էր բոլոր պետական պաշտոնյաների համար մշակել շահերի բախման վերաբերյալ միասնական օրենսդրություն և խթանել դրա ընդունումը՝ Հայաստանում բաղաժանան թափանցիկության ավելացման նպատակով, ինչպես նաև բարձրացնել պետական պաշտոնյաների, ՀՀ-ում հավատարմագրված միջազգային կազմակերպությունների, լրագրողների, ՀՀ ակտիվիստների և լայն հանրության իրազեկությունը շահերի բախման հետ կապված խնդիրների առումով:

Արդյունքներ

2010-ին ԹԻՀԿ-ն իր գործընկեր ԹԻ Ռուսիայի համագործակցությամբ կազմակերպել էր պետական, ակադեմիական կառույցների, ՀԿ-ների և լրատվամիջոցների ներկայացուցիչներից բաղկացած տասն հոգանոց հայաստանյան պատվիրակության մեկշաբաթյա ուսուցողական այց Ռուսիա՝ շահերի բախման վերաբերյալ ռուսական փորձի հետ ծանոթանալու նպատակով:

Թեման շահերի բախման, մասնավորապես, բարձրաստիճան պաշտոնյաների շրջանում գույքի և եկամուտների հայտարարագրումն էր, ինչպես նաև համապատասխան օրենսդրական կարգավորման՝ այդ երկրի փորձը:

Նախքան այցը կատարվել էր տվյալ ոլորտում կիրառվող փաստաթղթերի ուսումնասիրություն՝ մշակելու հայեցակարգ տեղական օրենքների ուսումնասիրության և Արևմտյան ու Արևելյան Եվրոպայի երկրների օրենսդրության համեմատական վերլուծություն նպատակով: Այցից հետո «Առավոտ» օրաթերթում և «Հետք» շաբաթաթերթում հրապարակվել են շահերի բախման վերաբերյալ հոդվածաշարեր, «Երկիր մեդիա» հեռուստաընկերությամբ այցի երեք ներկայացուցիչների մասնակցությամբ հաղորդում է հեռարձակվել, ուսուցողական այցի մասնակիցները հանդիպումներ են ունեցել շահերի բախման վերաբերյալ, այդ թվում՝ Մեծ Բրիտանիայի դեսպանի հետ:

Որպես հետագա զարգացում՝ ԹԻՀԿ-ը հանդես է եկել 2010 թ. դեկտեմբերի 31-ին առաջին ընթերցմամբ ընդունված «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի՝ «Հանրային ծառայողի էթիկա» գլուխ 6-ի վերաբերյալ դիտողություններով ու առաջարկություններով:

Conflict of Interest

Implementation period	01.04.2009 - 31.03.2010
Budget	AMD 22,000,000.00
Donors	British Embassy,Yerevan

Description

The project was designed to develop a unified legislation for conflicts of interest for all public officials and to advocate for its adoption in order to enhance political transparency in Armenia and to increase the awareness of state officials, international organizations based in Armenia, journalists, NGO activists and the general public on conflict of interest issues.

Outputs

In 2010 together with its partner TI Romania, TI organized a one-week study tour to Romania for a 10-member Armenian delegation, including representatives of state institutions, NGOs, academia and media, to learn from Romania's experience on conflict of interest. The topic was the legal regulation of conflict of interest, particularly, among high-level officials, regarding property and assets declaration, as well as the experience of that country in enforcing relevant legislation and regulations.

Prior to the tour, desk research was conducted to develop a concept paper for reviewing domestic laws and comparative analysis of legislation of Western and Eastern European countries. After the visit a series of articles on conflict of interest were published in "Aravot" daily and "Hetq" weekly; a program was aired on "Yerkir Media" television with 3 participants of the tour and meetings were held on conflict of interest, including one with the British Ambassador and the study tour participants.

As a follow-up, TIAC came up with remarks and suggestions related to the issues of ethics and conflict of interest of public servants on Armenian Draft Law on Public Service, adopted in the first reading on December 31, 2010.



2010
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏԿՈՒԹՅՈՒՆ
ANNUAL REPORT

Հայաստանի ՀԿ-ների մասնակցային կարողությունների զարգացում

Իրականացման ժամկետ 01.09.2009 - 31.12.2010

Բյուջե 6,457,015 ՀՀ դրամ

**Շնորհատու
կազմակերպություններ** Թրանսփարենսի Ինթերնեշլ Լիտվայի մասնաճյուղ,
Ժողովրդավարության զարգացման ազգային հիմնադրամ

Նկարագրություն

Ծրագրի նպատակն էր ավելացնել Հայաստանի ՀԿ-ների կարողությունները ԹՀԿ-ի գործընկեր կազմակերպության՝ Թրանսփարենսի Ինթերնեշլ Լիտվայի մասնաճյուղի հետ համագործակցությամբ: Այն ներառում է զարգացմանը խոչընդոտող պրոբլեմների ու հնարավորությունների բացահայտումը և բաղաձայնության մշակման գործում հանրային մասնակցության համապատասխան լավագույն փորձի ներդրումը՝ հաշվի առնելով այն միջավայրի առանձնահատկությունները, որում գործում են հայաստանյան ՀԿ-ները:

Արդյունքներ

Ծրագիրը ուսումնասիրել է օրենսդրական շրջանակն ու շահագրգիռ կողմերի կարծիքները սոցիալական ու բաղաձայնական այն միջավայրի վերաբերյալ, որում գործում են Հայաստանի հսկողություն իրականացնող ՀԿ-ները: Այն գնահատում է ՀԿ-ների առանձին հայեցակետեր, ինչպիսիք են դրանց կարողությունն ու զարգացումը, կառավարումն ու ղեկավարումը, թափանցիկությունն ու հաշվետվողականությունը, ֆինանսավորումն ու կայունությունը, վստահությունն ու ներգրավվածությունը, արդյունավետությունն ու ազդեցությունը: «Հայաստանի հասարակական կազմակերպությունների զարգացման հնարավորություններն ու ռիսկերը» հրապարակման մեջ ամփոփված է 24 ՀԿ-ի, 10 շնորհատու կազմակերպության, 5 պետական կառույցի, 2 կուսակցության և 5 լրատվամիջոցի կարծիքը:

Թի Լիտվայի մասնաճյուղի համագործակցությամբ ԹՀԿ-ը ՀԿ-ների հետ սեմինար է անցկացրել Երևանում՝ ուսումնասիրության արդյունքների քննարկման ու լիտվացի գործընկերների հետ փորձի փոխանակման նպատակով:

Ծրագրի շրջանակում մշակվել է Ժողովածու Թի Լիտվայի մասնաճյուղի կողմից՝ փոխանակելու համապատասխան միջազգային փորձը Հայաստանի գործընկերների հետ:

Boosting NGO Participatory Capacity in Armenia

Implementation period	01.09.2009 - 31.12.2010
Budget	AMD 6,457,015
Donors	Transparency International Lithuanian Chapter, The National Endowment for Democracy

Description

The purpose of this project was to increase the competence of Armenian NGOs in cooperation with TIAC's peer organization - Transparency International Lithuania. This involved revealing the problems and opportunities for development and introducing respective best practices of public participation in policy making, through understanding the environment where Armenian NGOs operate.

Outputs

The project conducted review of the legal framework and studied stakeholder opinions on the social and political environment where Armenian watchdog organizations operate. It focused on key aspects of NGO work, such as the capacity and development, governance and management, transparency and accountability, funding and sustainability, trust and engagement, effectiveness and impact of NGOs. Opinions of representatives of 24 NGOs, 10 donor organizations, 5 state institutions, 2 political parties and 5 media outlets were summarized in the publication "Risks and Opportunities for the NGO Sector in Armenia."

A workshop was convened in Yerevan by TIAC in cooperation with TI Lithuania to discuss the results of the study with NGOs and share experiences with Lithuanian counterparts.

Within the project a toolkit was developed by TI Lithuania for sharing international relevant practices with their Armenian counterparts.



Շահերի պաշտպանության և աջակցության հակակոռուպցիոն կենտրոններ երևանում, Գյումրիում և Վանաձորում

Իրականացման ժամկետ 08.10.2008 - 31.07.2010

Բյուջե 112,368,465.00 ՀՀ դրամ

Շնորհատու կազմակերպություններ

ԱՄՆ ՄՉԳ-ի հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագիր (ՀԳՄԾ)՝ իրականացվող Կասալս ենդ Ասոշիեյթս Ինք. ընկերության Հայաստանի մասնաճյուղի կողմից

Նկարագրություն

Ծրագրով շահերի պաշտպանության և աջակցության հակակոռուպցիոն կենտրոններ (ՇՊԱԿ) են հիմնադրվել ու գործել Երևանում, Շիրակում և Լոռիում՝ Նպատակ ունենալով կոռուպցիային առնչվող՝ բաղաբացիների կամ կազմակերպությունների բողոքները բավարարելու մեխանիզմ ապահովելը, և խթանելու համակարգային բարեփոխումները: Նախատեսված էր նաև վերլուծել բողոքները, գտնել այն սողանքները, որոնք Նպաստում են կոռուպցիայի գործադրման աճին՝ հանդես գալ առաջարկություններով ու կազմակերպել ինստիտուցիոնալ բարեփոխումներին ուղղված բարոգարչավներ, ինչպես նաև բարձրացնել կոռուպցիային առնչվող խնդիրների և բաղաբացիների իրավունքների վերաբերյալ հանրային իրազեկությունը: Ծրագիրն իրականացվել է գործընկեր ՀԿ-ների՝ Շիրակում՝ Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի և Լոռիում՝ Հելսինկյան բաղաբացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի միջոցով:

Արդյունքներ

Ծրագրի գործունեության ողջ ընթացքում Երևանում, Գյումրիում ու Վանաձորում գործել է թեժ գիծ: 2010 թ. հունվարից-հուլիս ընկած ժամանակահատվածում ՇՊԱԿ-ները ստացել են 555 դիմում, այդ թվում՝ Երևանում 352, Գյումրիում՝ 83, իսկ Վանաձորում՝ 120, որոնցից կոռուպցիային առնչվող գործերը 88-ն են, 36-ը՝ Երևանում, 10-ը՝ Գյումրիում և 42-ը՝ Վանաձորում: Ծրագրի աջակցությամբ բաղաբացիները կազմել են հանցագործությունների մասին 29 հաղորդում՝ ուղղված իրավապահ մարմիններին, ընդ որում. 11-ը՝ Երևանում, 6-ը՝ Գյումրիում և 12-ը՝ Վանաձորում, և 40 դիմում դատարաններին, որոնցից 21-ը՝ Երևանում, 3-ը՝ Գյումրիում և 16-ը՝ Վանաձորում: Գործերից 17-ը ստացել է դրական լուծում, այդ թվում 11-ը՝ Երևանում, 3 -ը՝ Գյումրիում և 3-ը՝ Վանաձորում:

Establishment and Operation of Anti-corruption Advocacy and Assistance Centers in Yerevan, Gyumri and Vanadzor

Implementation period	08.10.2008 - 31.07.2010
Budget	AMD 112,368,465.00
Donors	USAID Mobilizing Action Against Corruption Activity (MAAC), implemented by Armenia Branch Casals & Associates, Inc.

Description

The project established and operated Anti-corruption Advocacy and Assistance Centers (AACs) in Yerevan, Shirak and Lori in order to provide a mechanism to enhance the capacity of citizens and organizations to redress their grievances and stimulate system-level reforms. It was accomplished by advising and assisting citizens to formulate and channel complaints to respective authorities; analyzing complaints, identifying loopholes that promote proliferation of corrupt practices, developing policy proposals and organizing campaigns for institutional reforms; and raising public awareness on corruption matters and citizens' rights. The project was implemented with partner NGOs - "Asparez" Journalists' Club in Shirak and Helsinki Citizens' Assembly's Vanadzor Office in Lori.

Outputs

The project operated anti-corruption hotlines in Yerevan, Gyumri and Vanadzor. Throughout January-July 2010, AACs received 555 applications: 352 in Yerevan, 83 in Gyumri and 120 in Vanadzor. Out of reported problems 88 related to corruption: 36 – in Yerevan, 10 – in Gyumri and 42– in Vanadzor. The project assisted citizens to develop 29 reports (11 in Yerevan, 6 in Gyumri and 12 in Vanadzor) on criminal acts addressed to law enforcement bodies and 40 court applications (21 in Yerevan, 3 in Gyumri and 16 in Vanadzor). In 17 cases (11 in Yerevan, 3 in Gyumri and 3 in Vanadzor) the support provided by NGOs resulted in some corrective action.



2010
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ANNUAL REPORT

Հակակոռուպցիոն ուսումնասիրությունների վրա հիմնված շահերի պաշտպանություն

Իրականացման ժամկետ 01.07.2009 - 31.03.2013

Բյուջե 73,698,422.50 ՀՀ դրամ

**Շնորհատու
կազմակերպություններ** Թրանսփարենսի Ինթերնեշլ քարտուղարություն, Բեռլին, Մեծ
Բրիտանիայի միջազգային զարգացման նախարարություն

Նկարագրություն

Ծրագրի նպատակն է բարձրացնել Հայաստանի հանրային հատվածի թափանցիկության և հաշվետվողականության մակարդակը կոռուպցիայի դեմ առավել արդյունավետ պայքարի, իշխանությունների վրա ավելի մեծ ճնշում գործադրելու, միջազգային օգնության առավել արդյունավետության և կոռուպցիային առնչվող հարցերի վերաբերյալ հանրային իրազեկության բարձրացման միջոցով: Այն իրականացվում է օրինավորության ազգային համակարգի հետազոտության, ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիայի դրույթների կենսագործման վերլուծության ու շահերի պաշտպանության քարոզարշավի միջոցով՝ հիմնված հետազոտության արդյունքների վրա:

Արդյունքներ

Հայաստանում օրինավորության ազգային համակարգի յուրաքանչյուր հիմնասյանն առնչվող օրենսդրության և պրակտիկ կիրառության վերաբերյալ կատարվել է հետազոտություն համապատասխան փորձագետների կողմից: Այնուհետև այն թարմացվել է նոր տվյալներով, խմբագրվել և թարգմանվել՝ նախապատրաստելով հրապարակման:

Research Based Anti-corruption Advocacy

Implementation period	01.07.2009 - 31.03.2013
Budget	AMD 73,698,422.50
Donors	Transparency International Secretariat, Berlin/UK Department for International Development

Description

The project aims at increasing levels of transparency and accountability in the Armenian public sector through a more effective fight against corruption, by increasing pressure on authorities, heightening effectiveness of international assistance and enhancing public awareness on issues of corruption. The goal is achieved through conducting NIS research and gap analysis of UNCAC, and carrying out advocacy campaign based on research results.

Interim Outputs

Research on legislation and practice on National Integrity System in Armenia was conducted by respective experts on each of the pillars, followed by updating, editing and translating for NIS publication.



2010
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ANNUAL REPORT

Եվրոպական հարևանության քաղաքականության ծրագրի իրականացման մոնիտորինգ

Իրականացման ժամկետ 01.09.2009 - 30.06.2011

Բյուջե 25,071,915.00 ՀՀ դրամ

**Շնորհատու
կազմակերպություններ** Թրանսփարենսի Ինթերնեշլ քարտուղարություն, Բեռլին,
Նորվեգիայի Արտաքին գործերի նախարարություն

Նկարագրություն

Ծրագրի նպատակն է Եվրոպական հարևանության քաղաքականության գործողությունների ծրագրի շրջանակում գնահատել Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի ստանձնած պարտավորությունների կատարումը: Այն իրականացվում է գործուն մեթոդաբանության մշակմամբ, այն է՝ կոնկրետ չափանիշների սահմանմամբ, յուրաքանչյուր երկրի իրավիճակի գնահատմամբ և փաստերի վրա հիմնված շահերի պաշտպանության իրականացմամբ ազգային և Եվրամիության մակարդակով՝ մասնակից երկրների ԹԻ մասնաճյուղերի, Բյուրեղում Թրանսփարենսի Ինթերնեշլ-ի ԵՄ հետ կապերի գրասենյակի և Բեռլինում տեղակայված ԹԻ քարտուղարության համատեղ ջանքերով՝ նպաստելով առավել արդյունավետ հակակոռուպցիոն բարեփոխումների իրականացմանը:

Միջանկյալ արդյունքներ

Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում կոռուպցիայի դեմ պայքարին նվիրված առաջընթացի գեկույցները ներկայացվել են Եվրոպական քաղաքականության կենտրոնում «Կոռուպցիան և կառավարումը Հարավային Կովկասում» թեմայով քննարկման ընթացքում: Այնուհետև ԹԻՀԿ-ը լույս է ընծայել «Եվրոպական հարևանության քաղաքականություն. Հայաստանի հակակոռուպցիոն պարտավորությունների 2009 թ. մոնիտորինգ» հրապարակումը անգլերենով և հայերենով: Չեկույցում փորձ է արվել գնահատել Հայաստանի դատական և քաղաքացիական ծառայության համակարգերում ներկայումս իրականացվող բարեփոխումները, ինչպես նաև ԳՐԵԿՈ-ի այն հանձնարարականների հարցում եղած առաջընթացը, որոնք ԳՐԵԿՈ-ի՝ 2008 թ. վերջին գնահատման համաձայն, համարվել են մասնակիորեն իրականացված կամ առիասարակ չիրականացված:

Monitoring of Implementation of European Neighborhood Policy

Implementation period	01.09.2009 - 30.06.2011
Budget	AMD 25,071,915.00
Donors	Transparency International Secretariat, Berlin/Norwegian Ministry of Foreign Affairs

Description

The purpose of the project is to assess the implementation of commitments within the framework of the European Neighborhood Policy (ENP) Action Plans in Armenia, Azerbaijan and Georgia. This is accomplished by developing a well-crafted methodology with concrete benchmarks, conducting an assessment of the situation in each country and carrying out evidence-based advocacy at national and EU levels by the joint efforts of TI Chapters in participating countries, TI Liaison Office to the EU in Brussels and TI Secretariat in Berlin, to promote more effective anti-corruption reforms.

Interim Outputs

The TI progress reports on fighting corruption in Armenia, Azerbaijan and Georgia were presented in the European Policy Center at a discussion titled "Corruption and Governance in the South Caucasus."

This was followed by the publication of "European Neighborhood Policy: Monitoring Armenia's Anti-corruption Commitments in 2009", by TIAC in English and Armenian. The report attempted to assess the current reforms in the Armenian judiciary and civil service system, along with the progress made in addressing those recommendations by GRECO deemed to be implemented only partially or not at all at the time of the last GRECO evaluation in 2008.



2010
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏԿՈՒԹՅՈՒՆ
ANNUAL REPORT

Երևան քաղաքում քաղաքաշինության մոնիտորինգ

Իրականացման ժամկետ 01.03.2010 - 30.09.2011

Բյուջե 20,000,000.00 ՀՀ դրամ

**Շնորհատու
կազմակերպություններ** Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության
հիմնադրամ, Բուդապեշտ

Նկարագրություն

Ծրագրի նպատակն է բարելավել քաղաքաշինության ոլորտի, մասնավորապես, ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների և ճարտարապետական հուշարձանների պաշտպանությանն առնչվող պրակտիկան: Այն հետամուտ է ուսումնասիրել որոշումների կայացմանն առնչվող օրենսդրությունն ու կիրառման պրակտիկան կոնկրետ դեպքերի կապակցությամբ և մշակել քաղաքականության փոփոխությանն ուղղված առաջարկություններ: Բացի այդ, նախատեսված է Երևանի ավագանու նիստերին ներկայանալ որպես դիտորդ՝ կանաչ տարածքների և ճարտարապետական հուշարձանների վերաբերյալ որոշումների կայացման նպատակով:

Միջանկյալ արդյունքներ

Ծրագրի շրջանակում տեղեկություններ են հավաքվել Երևանի հանրային կանաչ տարածքների և ոչնչացված կամ վտանգված ճարտարապետական հուշարձանների վերաբերյալ՝ տվյալների առցանց շտեմարան մշակելու համար: Նաև ուսումնասիրության է ենթարկվել թափանցիկության և մասնակցության վերաբերյալ օրենսդրությունը: Որոշում կայացնելու պրակտիկայի վերաբերյալ ուսումնասիրությունը խոչընդոտվել է, քանի որ Երևանի քաղաքապետարանում կազմակերպությանն ապօրինի կերպով մերժել են տրամադրել հանրային զբոսայգիներում շինարարությանն առնչվող փաստաթղթեր և դիտորդությամբ հանդես գալ Երևանի ավագանու նիստերին: Ուստի, տվյալների ձեռքբերմանը զուգահեռ, ԹԻՀԿ-ը նախաձեռնել է ռազմավարական դատավարություն՝ իրականացնելու տեղեկատվության ձեռքբերման և տեղական ինքնակառավարման խնդիրներին մասնակցության իր իրավունքը:

Monitoring of Urban Development in Yerevan City

Implementation period	01.03.2010 - 30.09.2011
Budget	AMD 20,000,000.00
Donors	Open Society Institute Assistance Foundation, Budapest

Description

